



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

## ՀՐԱՄԱՆ

N 220-Ա/2

21.02.2020թ.

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի ԹԻՎ 772-Ա/2 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով ամրագրված դրույթները.

### ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի եվ սպորտի նախարարի 2019 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 772-Ա/2 հրամանով հաստատված հանրակրթական դպրոցների մանկավարժներին և դպրոցահասակ երեխաներին տրանսպորտային ծառայությունների դիմաց փոխհատուցման կարգում (այսուհետև՝ Կարգ) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Կարգի 2-րդ կետում՝

ա. 1-ին ենթակետում «մանկավարժներին» բառը փոխարինել «ուսուցիչներին» բառով, իսկ «0.5-ից ավելի» բառերը փոխարինել «0.5 և ավելի» բառերով,

բ. 2-րդ ենթակետում «5 կմ-ից բառերը» փոխարինել «3 կմ-ից» բառերով,

գ. լրացնել նոր 2.1.-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«2.1. Սույն կարգի 2-րդ կետի 1-ին ենթակետում նշված ուսուցչի 0.5 և ավելի հաստիքային դրույթի սահմանափակումը չի տարածվում Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1444-Ն որոշմամբ հաստատված սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ համայնքների ցանկում ընդգրկված

բնակավայրերի դպրոցների ուսուցիչների, իսկ սույն կարգի 2-րդ կետի 2-րդ ենթակետում նշված 3 կմ հեռավորության սահմանափակումը՝ մինչև 2020 թվականի հունվարի 1-ը «1146. Հանրակրթության» ծրագրի «12002. Հանրակրթական դպրոցների մանկավարժներին և դպրոցահասակ երեխաներին տրանսպորտային ծախսերի փոխհատուցում» միջոցառումից օգտվող դպրոցահասակ երեխաների վրա:»,

2) Կարգի 3-րդ կետը «թվաբանականը» բառից հետո լրացնել «կամ համապատասխան մարզպետարանի կողմից սահմանված երթուղային ցանցի գնացուցակը» բառերով, ինչպես նաև լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ «Ամսական փոխհատուցման առավելագույն չափը յուրաքանչյուր ուսուցչի և դպրոցահասակ երեխայի համար չի կարող գերազանցել 15 000 ՀՀ դրամը:»,

3) Կարգը լրացնել նոր 11-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«11. «1146. Հանրակրթության ծրագիր» ծրագրի «12002. Հանրակրթական դպրոցների մանկավարժներին և դպրոցահասակ երեխաներին տրանսպորտային ծախսերի փոխհատուցում» միջոցառման բյուջետային ստորադաս կարգադրիչ հանդիսացող մարմնի որոշմամբ տնտեսապես արդյունավետ լինելու դեպքում սույն կարգով հատկացվող գումարների շրջանակներում կարող են ձեռք բերվել նաև ուղեփոխադրման ծառայություններ՝ պայմանով, որ այդ ծառայություններից պետք է օգտվեն առնվազն սույն կարգի 2-րդ և 2.1-րդ կետի պահանջները բավարարող ուսուցիչներն ու դպրոցահասակ երեխաները:»:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և տարածվում է 2020 թվականի հունվարի 1-ից հետո ծագած իրավահարաբերությունների վրա:

**ՆԱԽԱՐԱՐ**

**ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

X